ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 օգոստոսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

105
(3314)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

4 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ Է ԿՈՒՏԱԿԵԼ

Երեկ ԱԺ փոխնախագահի թեկնածու Հայկ Կոնջորյանի թեման քննարկելու ժամանակ նրա կնոջ կողմից կառավարվող «Հայփոստ»-ի թեման շատ շրջանառվեց: «Ժողովուրդ» օրաթերթը հիշեցնում է, որ 2020 թվականից, երբ «Հայփոստ»-ի կառավարումն անցավ պետությանը, ընկերության ֆինանսական պատկերը շարունակում է վատթարանալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս ժամանակահատվածում «Հայփոստ»-ը կուտակել է շուրջ 4 միլիարդ դրամի վնաս, ինչը լուրջ հարցեր է առաջացնում պետական կառավարման արդյունավետության վերաբերյալ: Ինչպես հայտնի է, Էդուարդո Էռնեկյանից վերցվեց «Հայփոստ»-ը եւ հանձնվեց Կառավարությանը:

Հիշեցնենք, որ 2024 թվականից «Հայփոստ»-ի գլխավոր գործադիր տնօրենն է Շուշան Ալեքսանյանը՝ Հայկ Կոնջորյանի կինը: Նրա ամսական աշխատավարձը 3.6 մլն դրամ է կամ շուրջ 10 հազար ԱՄՆ դոլար:

Տնտեսագիտության պարզ կանոնն ասում է՝ եթե ընկերությունն ավելի շատ է ծախսում, քան վաստակում, ուրեմն այն աշխատում է վնասով: Դա կարող է պայմանավորված լինել ուռճացված վարչական ծախսերով, բարձր աշխատավարձերով, գործուղումներով կամ պարզապես բիզնեսի զարգացման արդյունավետ ռազմավարության բացակայությամբ:

Տնտեսագետ Մեսրոպ Առաքելյանի ձեւակերպմամբ՝ սովորաբար նման իրավիճակում մասնավոր ընկերությունները կանգնում են երկու ընտրության առաջ՝ կա՛մ սնանկանում են, կա՛մ հիմնադիրը լրացուցիչ ներդրումներ է կատարում՝ պարտքերն ու վնասները ծածկելու համար:

«Հայփոստ»-ի դեպքում, սակայն, իրավիճակն այլ է. հիմնադիրը պետությունն է, իսկ վնասների բեռը՝ հարկատուների ուսերին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ազգային ժողովի արդեն նախկին նախագահ Ալեն Սիմոնյանը կարծես դժվարությամբ է հաշտվում ինչպես պաշտոնազրկման, այնպես էլ թիմից աստիճանաբար առանձնացվելու հանգամանքի հետ: «Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրները փոխանցում են, որ մինչ արձակուրդ մեկնելը Սիմոնյանը դիմել է վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ խնդրել իրեն աշխատանքի տեղավորել Կառավարությունում: Ըստ այդմ, նա ցանկություն է հայտնել նշանակվել փոխվարչապետ կամ Միացյալ Թագավորությունում՝ Լոնդոնում, Հայաստանի դեսպան: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթի՝ Կառավարությանը մոտ կանգնած աղբյուրները փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանը կտրուկ մերժել է այդ առաջարկները եւ Ալեն Սիմոնյանին հորդորել է գնալ արձակուրդ ու հանգստանալ: Հիշեցնենք, որ Ալեն Սիմոնյանը հուլիսի կեսից գտնվում է արտերկրում եւ մինչ օրս չի վերադարձել Հայաստան: Գուցե Սիմոնյանը հույս ունի, որ օգոստոսի կեսերին Հայաստան վերադառնալուց հետո կկարողանա վարչապետից որեւէ պաշտոնական առաջարկ ստանալ: Սակայն Կառավարության մեր աղբյուրները պնդում են, որ Նիկոլ Փաշինյանը խիստ դժգոհ է Ալեն Սիմոնյանի վերջին շրջանի վարքագծից եւ նրա հետ կապված մի շարք դրվագներից, ինչի հետեւանքով մոտ ապագայում նրան որեւէ պաշտոնի նշանակելու հարց օրակարգում չկա:



Ընդդիմադիր դաշտում, ինչպես պարզվում է, իրավիճակը այնքան էլ համերաշխ չէ, որքան այն ներկայացվում է հանրությանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վերջին շաբաթներին լուրջ լարվածություն է հասունացել «Հայաստան» խմբակցության ներսում, իսկ հակասությունների առանցքում հայտնվել է պատգամավոր Աղվան Վարդանյանը: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Վարդանյանի եւ խմբակցության պատգամավոր Մեսրոպ Մանուկյանի հարաբերությունները զգալիորեն սրվել են: Բանն այն է, որ դեռեւս խորհրդարանական ընտրություններից առաջ եւ ընտրական գործընթացի ժամանակ Վարդանյանը թիմակիցների հետ քննարկել է Մանուկյանի վերաբերյալ տարբեր տեղեկություններ, նրա մասին պատմել տարաբնույթ դրվագներ եւ փոխանցել ներքին բնույթի ինֆորմացիա, որոնք բացասաբար կարող էին ազդել Մանուկյանի քաղաքական կարիերայի վրա: Սակայն, ինչպես պնդում են մեր զրուցակիցները, այդ խոսակցությունների մի մասը հասել է հենց Մեսրոպ Մանուկյանին: Արդյունքում երկու պատգամավորների միջեւ ձեւավորվել է փոխադարձ անվստահության մթնոլորտ, որը ժամանակի ընթացքում վերածվել է բացահայտ լարվածության: Բայց սա ներքին հակասությունների միայն մի մասն է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Խորհրդարանական վերջին զարգացումների ֆոնին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արտյոմ Մեհրաբյանի համար պատգամավոր լինելը շատ կարճ տեւեց: Նա չկա նոր խորհրդարանում, սակայն նրա պաշտոնավարման ընթացքն ու ներկայացրած հայտարարագրերը բավականին ուշագրավ պատկեր են ստեղծում: «Ժողովուրդ» օրաթերթը ցանկացել է պարզել, թե ով էր, ի վերջո, ՔՊ-ական այս պատգամավորը, եւ ինչ ունեցվածքով նա հեռացավ քաղաքական ասպարեզից՝ ուսումնասիրելով նրա անցած ուղին ու ֆինանսական միջոցների շարժը պաշտոնը ստանձնելիս եւ հեռանալիս: Արտյոմ Մեհրաբյանը, ով «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախկին փոխնախագահ, վաղամեռիկ Ղուկաս Մեհրաբյանի որդին է, մինչեւ խորհրդարան հասնելը զբաղեցրել է մի շարք առանցքային պաշտոններ: 2019 թվականին նա Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմի քարտուղարն էր, ապա՝ Չարենցավանի հաստոցաշինական գործարանի տնօրենը, իսկ 2022-2024 թվականներին ղեկավարում էր ԲՏԱ նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեն: ԱԺ է եկել 2025 թվականի ապրիլին: Դեռեւս 2024 թվականին ArmLur.am-ը եւ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էին, որ երբ վարչապետի որոշմամբ Մեհրաբյանն ազատվեց կոմիտեի նախագահի պաշտոնից, նրա ունեցվածքի պատկերը բավականին տպավորիչ էր:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՉԷ»

ArmLur.am-ի «Եկեղեցու ձայնը» հաղորդման հյուրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ հրատարակչության բաժնի պետ, արժանապատիվ տեր Արարատ քահանա Պողոսյանն է: ***(Սկիզբը՝ նախորդ համարում)***

- Եղել են ժամանակաշրջաններ, երբ Հայաստանը չի ունեցել պետականություն եւ ինքնիշխանություն, սակայն Հայ առաքելական եկեղեցին կարողացել է պահպանել իր գոյությունն ու կառույցը: Ո՞րն է այդ հաջողության գաղտնիքը:

- Եթե կարճ ձեւակերպենք, ապա կարելի է ասել, որ պետությունը պահպանում է սահմանները, իսկ եկեղեցին՝ ժամանակը: Դրանով է պայմանավորված եկեղեցու շարունակական ներկայությունը մարդկության պատմության մեջ:

Հայ ժողովրդի կյանքում եղել են ժամանակաշրջաններ, երբ մենք զրկված ենք եղել պետականությունից, սակայն եկեղեցին ոչ միայն շարունակել է գոյություն ունենալ, այլեւ իրականացրել է իր առաքելությունը եւ, անհրաժեշտության դեպքում, նաեւ պետական գործառույթներ է ստանձնել:

Հատկապես անկախության վերականգնման տարբեր փուլերում հայոց կաթողիկոսները դիվանագիտական առաքելությամբ հանդիպումներ են ունեցել եվրոպական եւ արեւելյան միապետների հետ, բանակցել Հայաստանի ազատագրման հարցերի շուրջ, բանագնացներ են ուղարկել՝ խնդրագրերով եւ ուղերձներով: Հայոց եկեղեցին երբեք չի խնայել իր ուժերը Հայաստանի ազատության եւ անկախության վերականգնման համար:

Միաժամանակ եկեղեցին գոյատեւել է տարբեր կայսրությունների եւ իշխանությունների ժամանակաշրջաններում՝ տեսնելով պարսից շահերի, արաբական խալիֆների, բյուզանդական եւ հռոմեական կայսրերի, ռուսական ցարերի, ինչպես նաեւ խորհրդային աթեիստական իշխանությունների հալածանքները: Սակայն այն պահպանվել է, որովհետեւ հնարավոր է գրավել պետության տարածքը, բայց հնարավոր չէ գրավել մարդու հավատը, խիղճը, մշակույթը եւ լեզուն:

Եթե եկեղեցին չպահպաներ հայկական լեզուն ու ինքնությունը, գուցե այն եւս կկորցներ իր գոյությունը: Սակայն Հայ Առաքելական եկեղեցին կարողացավ պահպանել այն արժեքները, որոնք անհնար է նվաճել զենքով:

- Այսօր Կոստանդնուպոլիսը հայկական չէ, Արցախը բռնազավթված է, սակայն գործում են Պոլսո պատրիարքարանը եւ Արցախի թեմը: Ինչպե՞ս եք դա բացատրում:

- Եկեղեցու առաքելությունը տարածքային չէ: Այն ներկայացնում է ոչ թե սահմաններ, այլ ժամանակ եւ հոգեւոր կյանք: Այդ պատճառով հնարավոր է գրավել որեւէ տարածք, սակայն անհնար է գրավել եկեղեցին:

Բյուզանդական կայսրությունն այլեւս գոյություն չունի, Օսմանյան կայսրությունն էլ անցյալում է, բայց Պոլսո պատրիարքարանը շարունակում է իր գործունեությունը: Նույն կերպ այսօր, թեեւ Արցախը բռնազավթված է, Արցախի թեմը շարունակում է գոյություն ունենալ, որովհետեւ թեմը համայնք է, ոչ միայն աշխարհագրական տարածք: Այն կարող է շարունակել իր առաքելությունը նույնիսկ վտարանդիության պայմաններում:

- Ինչո՞ւ պետությունը չի կարող ընտրել կամ պաշտոնանկ անել Ամենայն հայոց կաթողիկոսին:

- Դա նախեւառաջ հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին, որոնք երաշխավորում են եկեղեցու ինքնավարությունը: Պետությունը իրավասու չէ միջամտել եկեղեցու ներքին կառավարմանը: Բացի այդ, դա հակասում է նաեւ միջազգային իրավական նորմերին եւ եկեղեցու կանոնական կարգին: Հայոց կաթողիկոսին ընտրում է Ազգային եկեղեցական ժողովը, որն արտահայտում է ողջ հայության կամքը: Եկեղեցու հավատքի համաձայն՝ այդ ընտրությունը կատարվում է նաեւ Սուրբ Հոգու առաջնորդությամբ:

Պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ իշխանությունները փորձել են միջամտել կաթողիկոսի ընտրությանը կամ իրենց կամքով կաթողիկոս նշանակել: Սակայն եկեղեցին եւ ժողովուրդը չեն ընդունել այդպիսի ընտրությունները, եւ նման անձանց անունները չեն ընդգրկվել Հայոց եկեղեցու պաշտոնական կաթողիկոսների շարքում:

- Ձեր հոգեւոր ծառայության ընթացքում ո՞րն եք համարում Ձեր ամենադժվար՝ «խաչի ճանապարհը»:

- Խաչի ճանապարհը յուրաքանչյուր քրիստոնյայի համար ինքնազոհաբերման ճանապարհ է: Քրիստոս կոչ է անում վերցնել սեփական խաչը եւ հետեւել Իրեն: Ինձ համար մեծ պատիվ է ծառայել Հայ Առաքելական Սուրբ եկեղեցուն եւ իմ ժողովրդին: Դա եմ համարում իմ խաչի ճանապարհը: Իսկ թե որքանով եմ պատվով անցել այդ ճանապարհը, պիտի գնահատեն ոչ թե ես, այլ հավատացյալ ժողովուրդը եւ պատմությունը: Մարդու մասին պետք է խոսեն նրա գործերը:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն հոգեւորականներին, որոնք դժվարությունների պատճառով հեռացել են իրենց ծառայությունից: Կարո՞ղ են նրանք վերադառնալ:

- Եկեղեցին միշտ բաց է ապաշխարության եւ վերադարձի համար: Ինչպես անառակ որդու առակում, մարդը զղջմամբ, ապաշխարությամբ եւ իր սխալների հատուցմամբ կարող է վերականգնվել:

Եթե կա անկեղծ զղջում եւ վերադարձ դեպի եկեղեցի, ապա վերականգնվելու հնարավորություն կա: Սակայն առանց ապաշխարության եւ սեփական սխալներն ընդունելու եկեղեցի վերադառնալը հնարավոր չէ:

Իմ խորհուրդն է հաղթահարել սեփական վախերը, հասկանալ եկեղեցու հավիտենական առաքելությունը եւ հավատարիմ մնալ այն ուխտին, որը հոգեւորականը տվել է իր ձեռնադրության ժամանակ՝ ծառայելու Աստծուն, եկեղեցուն եւ ժողովրդին:

- Ինչո՞ւ ընտրել խաչի ճանապարհը, երբ ավելի հեշտ ճանապարհներ կան:

- Քրիստոնյաների համար խաչը Աստծո սիրո ամենամեծ խորհրդանիշն է: Խաչի վրա Քրիստոս նույնիսկ Իր խաչողներին ներեց՝ ասելով. «Հայր, ներիր նրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում»:

Խաչը վկայում է, որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց մարդկության փրկության համար: Քրիստոնյաների կատարելատիպը Հիսուս Քրիստոսն է, եւ մենք կոչված ենք նմանվելու Նրան՝ սիրելով մեր մերձավորին:

Այսպիսով, խաչը խորհրդանշում է ոչ միայն Աստծո սերը մարդու նկատմամբ, այլեւ մարդու սերը իր մերձավորի հանդեպ: Հայ ժողովուրդը դարեր շարունակ առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել խաչի նկատմամբ, եւ հենց այդ պատճառով այն դարձել է մեր ազգային ու հոգեւոր ինքնության կարեւորագույն խորհրդանիշներից մեկը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀՈՐՄՈՒԶԻ ՆԵՂՈՒՑՈՒՄ ՆԱՎ Է ԽՈՑՎԵԼ

Քաթարի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ շարունակվում են դիվանագիտական ջանքերը՝ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ հակամարտության կարգավորման ուղղությամբ:

Գերատեսչության խոսնակ Մաջեդ ալ-Անսարին նշել է, որ միջնորդ երկրները սերտ համագործակցում են կողմերի հետ՝ բանակցությունները վերսկսելու եւ առաջարկների փոխանակումն ապահովելու նպատակով: Նրա խոսքով՝ այս պահին գլխավոր նպատակը տարածաշրջանում լարվածության հետագա սրումը կանխելն է, վերաբացել Հորմուզի նեղուցը եւ վերականգնել դիվանագիտական գործընթացը: Ալ-Անսարին ընդգծել է, որ Քաթարը գործընկերների եւ հակամարտող կողմերի հետ աշխատում է դիվանագիտական լուծման հասնելու ուղղությամբ: Միաժամանակ, բրիտանական Vanguard ծովային անվտանգության ընկերությունը հայտնել է, որ Օմանի ափերի մոտ՝ Հորմուզի նեղուցում, հարվածի է ենթարկվել առեւտրային նավ: Նախնական տվյալներով՝ անձնակազմի մեկ անդամ անհետ կորել է:

ԱՄՆ ֆինանսների նախարար Սքոթ Բեսենթն էլ CNBC-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ Իրանի հետ Հորմուզի նեղուցի վերաբացման վերաբերյալ համաձայնություն կարող է ձեռք բերվել արդեն առաջիկա երկու օրվա ընթացքում: «Մենք բանակցում ենք իրանցիների հետ եւ կարծում եմ, որ այսօր կամ վաղը կարող ենք համաձայնության հասնել՝ վերաբացել նեղուցը եւ այս հակամարտությունը տեղափոխել ավելի բնականոն հուն», - ասել է Բեսենթը: Նա նաեւ նշել է, որ հնարավոր համաձայնությունը կապահովի նեղուցով նավերի ազատ տեղաշարժը՝ առանց որեւէ վճարի սահմանման:

Միեւնույն ժամանակ, Հորդանանը միացել է Քաթարի, Թուրքիայի եւ Եգիպտոսի հայտարարություններին՝ դատապարտելով Իսրայելի կողմից Գազայի հատվածում հրադադարի շարունակական խախտումները: Ամմանը կոչ է արել ապահովել մարդասիրական օգնության անխոչընդոտ մուտքը Գազա եւ լիարժեք պաշտպանություն տրամադրել խաղաղ բնակիչներին, բուժհաստատություններին եւ մարդասիրական առաքելությունների աշխատակիցներին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աշխատակազմին է ներկայացրել նորանշանակ նախարար Դավիթ Թադեւոսյանին:

Վարչապետը շնորհակալություն է հայտնել Մխիթար Հայրապետյանին՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնում գործունեության համար եւ նշել, որ տեխնոլոգիաների ոլորտն արդեն երկար ժամանակ Հայաստանում զարգացումներ է ունենում: «Բայց պիտի ասեմ նաեւ, որ վերջին մեկ տարվա զարգացումները Հայաստանի համար հատկապես նշանակալի են, որովհետեւ մենք հիմա արդեն ավելի ու ավելի լիարժեք նորագույն տեխնոլոգիաների եւ արհեստական բանականության հետ առնչվելու հնարավորություն ունենք: Իհարկե, մեծ աշխատանք է արված, Հայաստանում հիմա արդեն գործում է ենթակառուցվածք, որն ընդամենը տարիներ առաջ կարող էր թվալ դժվար իրագործելի»,- ասել է վարչապետը:

Երկրի ղեկավարը հիշատակել է Երեւանի պետական համալսարանի սուպերհամակարգչային կենտրոնը, «ԷԼԵՎԵՅԹ ԷՅԱՅ» արհեստական բանականության գործարանը, Firebird ընկերության կողմից օրերս գործարկվելիք արհեստական բանականություն գործարանը: Նիկոլ Փաշինյանի խոսքով՝ տեխնոլոգիաների հետ համահունչ քայլելը կառավարության կարեւորագույն խնդիրներից մեկն է: «Բայց այս առումով մենք պետք է նաեւ ուշադիր եւ հաղորդակից լինենք այն գլոբալ բանավեճերին, որոնք տեղի են ունենում տեխնոլոգիաների առնչությամբ, այն տրամաբանությամբ, որ ամեն ինչ պետք է անենք, որպեսզի տեխնոլոգիաների ներդրումը ոչ թե պակասեցնի մարդկանց աշխատելու եւ վաստակելու հնարավորությունը, այլ հակառակը՝ հնարավորինս ավելի հեշտ եւ արդյունավետ դարձնի այն»,- ասել է վարչապետը՝ ավելացնելով, որ գործադիրը բավականին հագեցած օրակարգ ունի տեխնոլոգիաների ոլորտում:

«Այստեղ, իհարկե, կան շատ լուրջ եւ տեւական խնդիրներ, որոնք կառավարման, պլանավորման եւ որոշումներ կայացնելու անհրաժեշտություն են առաջացնում, բայց սա առաջիկա աշխատանքային օրակարգ է, որին կանդրադառնանք Կառավարության ծրագրի նախագծի քննարկման եւ ընդունման համատեքստում»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Մխիթար Հայրապետյանը շնորհակալություն է հայտնել վարչապետին՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնը վստահելու համար եւ հավելել, որ դա ընկալել է որպես բացառիկ հնարավորություն՝ ծառայելու պետությանը: Նախկին նախարարը համոզմունք է հայտնել, որ Դավիթ Թադեւոսյանը նախարարի պաշտոնում հաջողելու է՝ հաշվի առնելով գիտելիքներն ու փորձը, եւ հայտնել իր աջակցությունն այդ գործում:

Իր հերթին, նորանշանակ նախարար Դավիթ Թադեւոսյանը շնորհակալություն է հայտնել վարչապետին վստահության եւ տրված հնարավորության համար: «Ես այս պաշտոնը ստանձնում եմ՝ քաջ գիտակցելով, որ ամեն ինչ ունի սկիզբ եւ ավարտ: Փորձելու եմ կիրառել մաքսիմալ ջանքերը՝ հպարտությամբ եւ լիարժեք կատարված աշխատանքի զգացումով այս պաշտոնը հաջորդ նախարարին թողնելու համար»,- ասել է նախարարը:

ԲԱՅՐԱՄՈՎՆ ԸՆԴԳԾԵԼ Է

Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ երկկողմ բանակցությունները կարեւոր արդյունքներ են տալիս խաղաղության գործընթացում:

Այս մասին Բաքվում Շվեյցարիայի Համադաշնության արտաքին գործերի դաշնային նախարար եւ ԵԱՀԿ գործող նախագահ Իգնացիո Կասիսի հետ համատեղ մամուլի ասուլիսում հայտարարել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը:

Նախարարը նշել է, որ երկու երկրների միջեւ այժմ ստեղծվել են փաստացի խաղաղության պայմաններ, եւ քայլեր են ձեռնարկվում վստահության ամրապնդման ուղղությամբ:

«Այսօր մենք կարող ենք վստահորեն ասել, որ երկկողմ ձեւաչափը ապացուցել է իր արդյունավետությունը խաղաղության օրակարգի առաջխաղացման գործում: Ձեռք բերված արդյունքները եւս մեկ անգամ հաստատում են դա», - ասել է Բայրամովը:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը շնորհավորական ուղերձ է հղել Նիկոլ Փաշինյանին Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում վերանշանակվելու առիթով: Ուղերձում ասված է.

«Հարգելի՛ Նիկոլ Վովայի,

Շնորհավորում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնում վերանշանակվելու առիթով:

Ձեզ ցուցաբերված բարձր վստահությունը հանդիսանում է պետական պատասխանատու պաշտոնում Ձեր անձնվեր աշխատանքի օրինաչափ արդյունք: Դա լայն հանրային աջակցության ակնառու վկայությունն է Ձեր ռազմավարական ուղեգծի, որն ուղղված է երկրի քաղաքացիների բարեկեցության բարձրացմանը եւ միջազգային հեղինակության ամրապնդմանը:

Ղազախստանում Ձեզ ճանաչում են որպես ականավոր պետական գործչի, ով անկեղծորեն շահագրգռված է ղազախ-հայկական ռազմավարական գործընկերության հետագա ակտիվացմամբ եւ ընդլայնմամբ: Վստահ եմ, որ համատեղ ջանքերով մենք կբազմապատկենք մեր ձեռքբերումները եւ Ղազախստանի ու Հայաստանի բազմակողմ միջպետական հարաբերությունները կհասցնենք որակապես նոր մակարդակի:

Օգտվելով առիթից՝ հարգելի՛ Նիկոլ Վովայի, մաղթում եմ Ձեզ հետագա հաջողություններ՝ ի բարօրություն բարեկամ Հայաստանի ժողովրդի իրականացվող Ձեր պատասխանատու պետական գործունեության մեջ»:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՀԵՌԱՑԱՎ

Ընդդիմադիր գործիչ, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը նոր գումարման խորհրդարանում չի լինի: Այս համատեքստում «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է պատգամավորի գույքի, եկամուտների եւ ծախսերի տարեկան հայտարարագրերը՝ հասկանալու համար, թե ինչ ունեցվածքով էր նա խորհրդարանում 2018 թվականին եւ ինչ ֆինանսական պատկեր ունի 2025 թվականին՝ մանդատը վայր դնելու շեմին:

2018 թվական. մուտք խորհրդարան

2018 թվականի արտահերթ ընտրություններին մասնակցելիս Արմեն Ռուստամյանը Կենտրոնական ընտրական հանձնաժողով էր ներկայացրել հայտարարագիր, ըստ որի՝նրան էր պատկանում Երեւանի Ա. Ահարոնյան փողոցում գտնվող 98,5 քառակուսի մետր մակերեսով մեկ բնակարան: Այդ ժամանակահատվածում նրա եկամուտները կազմել էին մոտ 8 միլիոն 958 հազար դրամ, որը գոյացել էր Ազգային ժողովի աշխատավարձից եւ տրված փոխառություններից: Դրամական միջոցները հայտարարագիրը ներկայացնելու օրվա դրությամբ կազմում էին 35 միլիոն դրամ, 16 հազար դոլար եւ 10 հազար եվրո:

2021 թվական. նոր մանդատ, նոր ավանդներ

2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո պատգամավորական մանդատ ստանձնելիս պատկերը որոշակիորեն հստակեցվել էր: Նա հայտարարագրել էր Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող բնակարան, որը նվիրատվությամբ ստացել էր դեռեւս 2011 թվականին: Փաստացի օգտագործման իրավունքով նա տիրապետում էր նաեւ ավտոտնակի եւ 2012 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենայի: 2021-ին Ռուստամյանը նաեւ բաժնետոմսեր էր ձեռք բերել 1,5 միլիոն դրամով: Նրա բանկային ավանդները կազմել էին ընդհանուր 30 միլիոն դրամ եւ 5 հազար դոլար: Տարեվերջին նրա կանխիկ միջոցները աճել էին՝ հասնելով 15 հազար դոլարի, 10 հազար եվրոյի եւ 3,7 միլիոն դրամի, իսկ ընդհանուր եկամուտը գերազանցել էր 6,7 միլիոն դրամը:

2022 թվական. ավտոմեքենան որպես նվեր եւ ֆինանսական աճ

2022 թվականին Արմեն Ռուստամյանի անշարժ գույքը մնացել էր անփոփոխ, սակայն նա որպես նվիրատվություն անձամբ ստացել էր այն նույն 2012 թվականի Toyota մակնիշի ավտոմեքենան, որը նախկինում միայն փաստացի շահագործում էր: Նրա բանկային ավանդներն աճել էին՝ հասնելով 36 միլիոն դրամի եւ 5 հազար դոլարի: Ավելացել էին նաեւ կանխիկ միջոցները՝ դառնալով 22 հազար դոլար, 4,1 միլիոն դրամ եւ 18 հազար եվրո: Տարվա եկամուտը կազմել էր մոտ 9,1 միլիոն դրամ, որը հիմնականում գոյացել էր աշխատավարձից եւ բանկային տոկոսներից:

2023 թվական. կայուն եկամուտների ավելացում

Հաջորդող՝ 2023 թվականին շոշափելի գույքային փոփոխություններ չէին արձանագրվել. նա պահպանել էր բնակարանն ու նվեր ստացած ավտոմեքենան: Փոխարենը շարունակել էին աճել եկամուտները՝ հասնելով 13,6 միլիոն դրամի: Ավանդների ընդհանուր ծավալը մնացել էր նույնը՝ 36 միլիոն դրամ եւ 5 հազար դոլար, իսկ կանխիկ միջոցները կազմել էին 4 միլիոն դրամ, 22 հազար դոլար եւ 18 հազար եվրո: Զուգահեռաբար, զգալիորեն աճել էին նրա բանկային հաշիվների մնացորդները:

2024 թվական. խոշորացող ավանդներ

2024 թվականին Արմեն Ռուստամյանի ֆինանսական միջոցները կրկին ավելացել էին: Նրա բանկային ավանդների ծավալն աճել էր եւս 4 միլիոն դրամով՝ հասնելով 40 միլիոն դրամի եւ 5 հազար դոլարի: Կանխիկ գումարները նույնպես վերընթաց աճ էին գրանցել՝ հասնելով 30 հազար դոլարի, 4,3 միլիոն դրամի եւ 20 հազար եվրոյի: Այս տարում նրա ընդհանուր եկամուտը կազմել էր 14,6 միլիոն դրամ, որի մեջ, բացի աշխատավարձից ու տոկոսներից, արդեն ներառվել էր նաեւ կենսաթոշակ:

2025 թվական. նոր ավտոմեքենա եւ ռեկորդային եկամուտ

Արդեն 2025 թվականին՝ պատգամավորական մանդատի ավարտական փուլում, Արմեն Ռուստամյանը թարմացրել է իր ավտոպարկը: Մարտ ամսին նա 3 միլիոն 900 հազար դրամով վաճառել է 2012 թվականի արտադրության Toyota-ն եւ դրան հաջորդող օրերին 6 միլիոն դրամով գնել նոր՝ 2024 թվականի արտադրության Hyundai մակնիշի ավտոմեքենա: Նրա բանկային ավանդները եւս աճել են. դրամային ավանդներից մեկը 10 միլիոնից դարձել է 12 միլիոն դրամ: Կանխիկ միջոցները նույնպես հասել են առավելագույնի՝ 35 հազար դոլար, 4,5 միլիոն դրամ եւ 20 հազար եվրո: 2025 թվականին նրա ընդհանուր եկամուտը կազմել է մոտ 17,4 միլիոն դրամ՝ գոյանալով աշխատավարձից, կենսաթոշակից եւ տարբեր բանկերում ունեցած ավանդների դիմաց ստացված ավելի քան 3,5 միլիոն դրամ տոկոսներից:

Ամփոփելով այս տարիների դինամիկան՝ կարող ենք արձանագրել, որ ընդդիմադիր պատգամավորի հիմնական անշարժ գույքը մնացել է անփոփոխ, սակայն խորհրդարանական գործունեության տարիներին կայուն եւ անընդմեջ աճել են նրա թե՛ բանկային ավանդները, թե՛ կանխիկ դրամական միջոցները եւ թե՛ տարեկան ստացվող եկամուտները: Այժմ նա նոր խորհրդարան չի անցնում ֆինանսական զգալիորեն ավելի կայուն դիրքերով, քան 2018 թվականին էր:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎՆԱՍԵԼ ԵՆ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Վերջին երկու շաբաթվա ընթացքում ուկրաինական անօդաչու սարքերի հարվածների հետեւանքով Ռուսաստանում շարքից դուրս են եկել Wildberries-ի խոշոր պահեստային համալիրների մի մասը:

DroneBomber-ի տվյալներով՝ օգոստոսի 2-ի դրությամբ վնասվել կամ դադարեցրել է աշխատանքը ընկերության 16 խոշոր լոգիստիկ կենտրոն՝ ընդհանուր 26-ից: Թեեւ դրանք կազմում են Wildberries-ի բոլոր օբյեկտների փոքր մասը, սակայն հենց այս կենտրոններով էր անցնում ընկերության հիմնական բեռնափոխադրումների ծավալը:

Ռուսական Forbes-ի գնահատմամբ՝ հարվածների հետեւանքով ընկերությունը կորցրել է պահեստային տարածքների առնվազն 17%-ը, իսկ վաճառողների վնասները կարող են հասնել մոտ 3,5 միլիարդ դոլարի:

Ուկրաինական կողմը պնդում է, որ հարվածները ազդել են նաեւ ռուսական ռազմական մատակարարումների վրա՝ սահմանափակելով անօդաչու համակարգերի համար անհրաժեշտ բաղադրիչների հասանելիությունը:

ՍՏԻՊՈՒՄ ԵՆ ՄԵԿՆԵԼ ՊԱՏԵՐԱԶՄ

Ռուսաստանը ճնշումների, սպառնալիքների եւ բռնության միջոցով փորձում է տղամարդկանց ստիպել պայմանագրեր կնքել եւ ծառայել Ուկրաինայի դեմ պատերազմում: Այս մասին գրում է The Wall Street Journal-ը՝ հղում անելով իրավապաշտպանների, փաստաբանների եւ վկաների տվյալներին: Ըստ հրապարակման՝ զինվորական հավաքագրողները տղամարդկանց կանգնեցնում են փողոցներում, աշխատավայրերի մոտ կամ կանչում են իբր փաստաթղթերի ստուգման նպատակով: Որոշ դեպքերում նրանց, ենթադրաբար, սպառնում են, ծեծի ենթարկում կամ ստիպում ստորագրել պայմանագիր:

Տեղեկությունը տարածվել է այն ֆոնին, որ Ռուսաստանը մեծ կորուստներ է կրում պատերազմում, սակայն Կրեմլը փորձում է խուսափել 2022 թվականի նման լայնածավալ զորահավաքից:

Իրավապաշտպանները պնդում են, որ որոշ շրջաններում ոստիկանությունը աջակցում է նման գործողություններին, իսկ նորակոչիկներ գտնելու համար նույնիսկ առաջարկվում են դրամական պարգեւներ:

Միաժամանակ, ԱՄՆ պաշտոնյաները չեն բացառում, որ Ռուսաստանը կարող է քննարկել նոր զորահավաքի անցկացումը՝ հնարավոր է՝ խորհրդարանական ընտրություններից հետո:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԱՐՏԻ 1-Ի ԳՈՐԾՈՎ

ՆՅՈՒԹԵՐԸ ՀԱՆՁՆՎԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ

Դատախազը 2026 թվականի օգոստոսի 3-ին, հաստատված մեղադրական եզրակացությամբ, Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է հանձնել 2003 թվականից մինչեւ 2008 թվականի մայիսի 29-ը ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Հ.Հ.-ի վերաբերյալ քրեական վարույթի նյութերը:

Հիշեցնենք, որ 2008 թվականի մարտի 1-2-ին Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում, դատախազը, սեփական նախաձեռնությամբ, 2026 թվականի ապրիլի 18-ին, հանրային քրեական հետապնդում է հարուցել ՀՀ ԿԱ ոստիկանության նախկին պետ Հ.Հ.-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական լիազորություններն անցնելուն օժանդակելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով) եւ 315-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանքներ): Քրեական վարույթով պարզվել է, որ Հ.Հ.-ն, 2003 թվականից մինչեւ 2008 թվականի մայիսի 29-ը զբաղեցնելով ՀՀ Կառավարությանն առընթեր ոստիկանության պետի պաշտոնը, իրականացնելով ՀՀ ոստիկանության ընդհանուր ղեկավարումը, 2008 թվականի մարտի 1-ին անցնելով իր պաշտոնեական լիազորությունները, ՀՀ ոստիկանության այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ հանցակցությամբ կազմակերպել է ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից բռնության եւ հատուկ միջոցների գործադրմամբ զուգորդված Երեւան քաղաքի «Ազատության» հրապարակում նստացույց անող խաղաղ ցույցը ցրելը, ցուցարարներին հրապարակից բռնության գործադրմամբ հարկադրաբար հեռացնելը, ապա քաղաքի կենտրոնական հատվածներում նրանց կուտակումները, հնարավոր ցույցերն ու հավաքները բացառելը, որպիսի գործողություններով անձանց իրավունքներին եւ օրինական շահերին, ինչպես նաեւ հասարակության եւ պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

Ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Հ.Հ.-ին առաջադրված մյուս մեղադրանքի հիմքում դրված է այն հանգամանքը, որ Հ.Հ.-ն, որպես ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավար, պարտավոր լինելով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել ոստիկանության գործունեությանն ու աշխատանքի կազմակերպմանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծեր եւ առաջարկություններ, այդ թվում՝ «Չերյոմուխա 7» արցունքաբեր եւ «Ջարյա» լուսաձայնային եւ այլ հատուկ միջոցների կիրառման կարգը, չի կատարել այդ պարտականությունը:

Հաշվի առնելով, որ Հ.Հ.-ն 2019 թվականին մահացել է, նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումը հանձնվել էր օրինական ներկայացուցչին՝ վերջինիս կնոջը: Հ.Հ.-ի կինն առարկել էր, որպեսզի մեղադրյալի մահվան հիմքով Հ.Հ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցվի:

Հսկող դատախազի կողմից թիվ 62202608 քրեական վարույթից անջատված թիվ 62292726 քրեական վարույթի նյութերը վերադարձվել էին վարույթ իրականացնող մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտեին՝ մեղադրական եզրակացությամբ նախաքննությունն ավարտելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

ԼՈՒՐԵՐ

ՆՅՈՒԹԱՊԵՍ ՇԱՀԱԳՐԳՌԵԼ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2026 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում «Հայաստան» դաշինքի կողմից պատգամավորության թեկնածու առաջադրված Հ.Դ.-ն եւ շտաբներից մեկի ղեկավար Հ.Ս.-ն, դաշինքի հավաքներին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռել են Ս.Մ.-ին՝ նրան աշխատանքի տեսքով քողարկված ձեւով խոստանալով վճարել 150 հզր ՀՀ դրամ գումար: Նախաքննության ընթացքում հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել Հ.Ս.-ի եւ Հ.Դ.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով (հավաքին մասնակցելու նպատակով նյութապես շահագրգռելը):

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Հուլիսի 28-ին վիճաբանություն եւ ծեծկռտուք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 18:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ավանի բաժնում տեղեկություն է ստացվել, որ «Ավան» հոգեկան առողջության կենտրոնի զորակոչային բաժանմունքում 2 զինակոչիկներ միմյանց ծեծի են ենթարկել, ինչի հետեւանքով ստացել են մարմնական վնասվածքներ: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է մեկնել ոստիկանության Ավանի բաժնի օպերատիվ խումբը՝ ավագ համայնքային ոստիկանի գլխավորությամբ:Գ. Շամշյանի տեղեկություններով՝ տեղում Ավանի համայնքային ոստիկանները պարզել են, որ նույն օրը՝ ժամը 17:45-ի սահմաններում, «Ավան» հոգեկան առողջության կենտրոնի զորակոչային բաժանմունքում վիճաբանության ժամանակ զինակոչիկներ՝ Կոտայքի մարզի բնակիչներ 24-ամյա Արթուր Ղ.-ն եւ 19-ամյա Արեգ Հ.-ն ձեռքերով փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, որից հետո նշված անձինք կենտրոնի դիմաց, այլ անձանց ներկայությամբ, շարունակել են վիճաբանությունը՝ կրկին փոխադարձ հարվածներ հասցնելով միմյանց:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ ոստիկանները նշված վայրից մարմնական վնասվածք պատճառելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ ոստիկանության Ավանի բաժին են տեղափոխել Արթուր Ղ.-ին եւ Կոտայքի մարզի բնակիչ 19-ամյա Մաքսիմ Ղ.-ին եւ ձեռնարկում են միջոցառումներ՝ Արեգ Հ.-ին հայտնաբերելու ուղղությամբ:-Դեպքի փաստով ոստիկանության Ավանի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՎԱՐՈՒՅԹ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ

Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի նախկին ղեկավար, «Միասնության թեւեր» կուսակցության անդամ Լիպարիտ Դրմեյանի հայցն ընդդեմ ՀՀ Նիկոլ Փաշինյանի վարույթ է ընդունվել: Այդ մասին տեղեկանում ենք «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից: Ջրպարտություն համարվող տեղեկությունները հերքելու պահանջով դատական հայցը վարույթ է ընդունվել օգոստոսի 3-ին եւ մակագրվել Երեւանի քաղաքացիական դատարանի դատավոր Ալֆրեդ Վարդանյանին:

ՄՈՏԸ ԵՂԵԼ Է 2 ՆԱՄԱԿ

Օգոստոսի 4-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 04:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Ավանի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Աճառյան 1 հասցեում՝ կամրջի տակ, դի կա: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր են ժամանել ոստիկանության Ավանի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Անդրանիկ Շահբազյանի գլխավորությամբ:Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Խաչատրյանի, գումարտակի հրամանատար Դավիթ Նիկողոսյանի, վաշտի հրամանատար Ալյոշա Այվազյանի եւ վաշտի հրամանատարի տեղակալ Տիգրան Հարությունյանի գլխավորությամբ: Տեղում պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունները հավաստի են:Համայնքային ոստիկաններն ու պարեկները կամրջի տակ հայտնաբերել են Երեւանի բնակիչ 78-ամյա Վանիկ Չ.-ի դին:Դեպքի մասին ոստիկանության Ավանի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Սիսակ Հայրապետյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ: Դեպքի փաստով քննչական բաժնում ինքնասպանության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Ֆոտոլրագրողի տեղեկություններով մահացածը մոտ հայտնաբերվել է 2 նամակ: Նախաքննության շահերից ելնելով այս պահին որոշ մանրամասներ չենք հայտնում:

ՀԱՐԿԵՐԻ ՉՎՃԱՐՄԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվում է ընկերության կողմից առանձնապես խոշոր չափերով՝ 1 մլրդ 137 մլն 16 հզր 645 ՀՀ դրամի հարկեր չվճարելու առերեւույթ դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթը:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա ընկերության տնօրեն Ա.Դ.-ի եւ ընկերության 100 տոկոս մասնակից եւ իրական շահառու Հ.Գ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելը): Ա.Դ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը, 15 մլն ՀՀ դրամի չափով գրավը եւ բացակայելու արգելքը, իսկ Հ.Գ.-ն կալանավորվել է: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

30 ՓԱԹԵԹ ԹՄՐԱՄԻՋՈՑ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ չորս տղամարդ՝ երկուսը Երեւանի, երկուսը՝ Կոտայքի մարզի բնակիչ, ապօրինի ձեռք բերում եւ իրացնում են թմրանյութ: Հուլիսի 29-ին՝ ժամը 18.50-ին, մայրաքաղաքի Նազարբեկյան փողոցում քրեական ոստիկանները չորսին էլ ձերբակալեցին եւ 33-ամյա երեւանցու վարած ավտոմեքենայով հանդերձ տեղափոխվեցին Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին: «Նետա» մակնիշի մեքենան կնիքվեց պահպանվող հատուկ տարածքում: Ձերբակալվածներից մեկի մոտ հայտնաբերվեց մոխրացած հետքով կաթուցիչ եւ մարիխուանայով փաթեթ: Տղամարդիկ խոստովանեցին, որ տելեգրամ հավելվածի միջոցով ձեռք են բերել թմրանյութ, որը պետք է իրացնեին: Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ, որի շրջանակում կատարված խուզարկությամբ «Նետա» մակնիշի մեքենայում հայտնաբերվեց մարիխուանայի նմանվող 335 գրամ զանգվածով փաթեթ: Օգոստոսի 1-ին խուզարկություն կատարվեց նաեւ Երեւանի Հալաբյան փողոցի բնակիչ 29-ամյա տղամարդու տանը: Հայտնաբերվեց կպչուն ժապավենով 30 փաթեթ՝ ընդհանուր ավելի քան 20 գրամ մարիխուանայի նմանվող զանգվածով: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● Հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 37 դեպք:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿԱՐՃԵԼ ԵՆ

2020 թվականից Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից ապօրինի կերպով Աղստեւ գետի հունը փոխելու, գետի հունում երկար, մեծ, բետոնե պատ կառուցելու հետեւանքով դենդրոպարկը մնացել է առանց ոռոգման ջրի, չորացել են 1500-ից ավելի հազվագյուտ ծառեր ու թփեր, որոնցից մոտ 250 տեսակը դենդրոպարկում արդեն վերացել է: Հայտնի չէ, թե դրանից հետո ինչ տրամաբանությամբ բուսաբանական այգու կարգավիճակ ունեցող Իջեւանի դենդրոպարկից 5,7 հեկտար տրվել է բնությանը միլիոնավոր դոլարների վնաս տված Իջեւանի գինու, կոնյակի գործարանին: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը դենդրոպարկի մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին՝ հանգստի գոտու վերածելու նպատակով: Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության հենապատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով: Սակայն գործարանը դրանից հետո շարունակել է կառուցապատումը, եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել, սակայն որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ: 2026թ. հունիսի 18-ին Գլխավոր դատախազություն հարցում եմ ուղարկել. «Իջեւանում Աղստեւ գետի հունի ավերման, այդ հունում Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից ապօրինի մեծ պատ կառուցելու կապակցությամբ 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել: Այդ վարույթը քննվում է հակակոռուպցիոն կոմիտեում: Գլխավոր դատախազությունը այդ վարույթով դատախազական հսկողություն իրականացնո՞ւմ է, չի՞ խախտվել վարույթը ողջամիտ ժամկետում քննելու հանգամանքը: Այդ քրեական վարույթով որեւէ անձի մեղադրանք առաջադրվե՞լ է»: Գլխավոր դատախազությունից պատասխանել են. «Հարցման վերաբերյալ տեղեկացնում եմ, որ Քրեական վարույթը կարճվել է՝ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ որեւէ հանցանքի բացակայությունը հաստատվելու եւ Քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ անձանց նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու եւ վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու հիմքերով»: 5 տարի շարունակված քննությամբ որոշվել է, որ հանցագործության չկա, վարույթը շարունակելու բոլոր հնարավորություններն էլ սպառված են: Սա Ն. Փաշինյանի իշխանության օրոք, իշխանության հետ սերտ կապեր ունեցողների հանդեպ արդար քննություն չկատարելու, նրանց հանդեպ քրեական հետապնդում չիրականացնելու ցայտուն օրինակ է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԱՌՆՎԱԶՆ 88 ՄԱՐԴ Է ԶՈՀՎԵԼ

Իսպանիայի իշխանությունները հայտնել են, որ Մարոկկոյից դեպի Սեուտա իսպանական անկլավ միգրանտների զանգվածային ներհոսքի հետեւանքով զոհերի թիվը հասել է առնվազն 88-ի: Միեւնույն ժամանակ Եվրամիությունը հրատապ քննարկումներ է նախաձեռնում՝ անկանոն միգրացիոն հոսքերի աճի պատճառով:



Իսպանիայի Սեուտա ինքնավար քաղաքում վերջին օրերին գրանցված միգրանտների աննախադեպ ներհոսքի հետեւանքով առնվազն 88 մարդ է զոհվել, հայտնել են իսպանական իշխանությունները:

Կառավարության ներկայացուցիչ Միգել Անխել Պերես Տրիանոն նշել է, որ վերջին տվյալներով զոհերի թիվը հասել է 72-ի, մինչդեռ ավելի ուշ Մարոկկոյի ներքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ իր տվյալներով մահացել է 11 մարդ՝ 10-ը խեղդվել են, եւս մեկը մահացել է ժայռոտ հատվածից ընկնելու հետեւանքով:

Վերջին օրերին շուրջ 60 հազար մարդ փորձել է հասնել Իսպանիայի հյուսիսաֆրիկյան Սեուտա անկլավ՝ մեծ մասը լողալով հատելով սահմանը: Սակայն նրանց մեծ մասը 48 ժամվա ընթացքում վերադարձել է Մարոկկո:

Սեուտայի փողոցներում իրավիճակը աստիճանաբար կայունանում է. իսպանական ոստիկանությունն ու զինվորականները շարունակում են հսկել քաղաքը, իսկ սահմանային հատվածներում իրականացվում են ծովային եւ ցամաքային պարեկային ծառայություններ:

Իսպանիայի իշխանությունները կատարվածի համար մեղադրում են հանցավոր խմբերին՝ պնդելով, որ նրանք սոցիալական ցանցերով կեղծ տեղեկություններ են տարածել, թե Իսպանիայի Գերագույն դատարանի վերջին որոշումից հետո միգրանտների մուտքը երկիր ավելի հեշտ է դարձել:

Միաժամանակ որոշ փորձագետներ չեն բացառում, որ Մարոկկոն դիտավորյալ թուլացրել է սահմանային վերահսկողությունը՝ Մադրիդի վրա քաղաքական ճնշում գործադրելու նպատակով:

Ստեղծված իրավիճակը քննարկվելու է նաեւ Եվրամիությունում: Երեքշաբթի նախատեսված է անդամ երկրների ներկայացուցիչների արտահերթ տեսակոնֆերանսը, որի ընթացքում կքննարկվեն անկանոն միգրացիայի դեմ համատեղ միջոցառումները եւ նոր զանգվածային ներխուժումները կանխելու քայլերը:

Իտալիան արդեն մեկ ամսով կասեցրել է Իսպանիայի հետ Շենգենյան համաձայնագրի այն դրույթների կիրառումը, որոնք թույլ էին տալիս երկու երկրների միջեւ ազատ տեղաշարժ:

Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը, իր հերթին, ԵՄ առաջնորդներին ուղղված նամակում քննադատել է մի շարք անդամ պետությունների արձագանքը՝ այն անվանելով «եսասիրական»:

Իրավիճակին անդրադարձել է նաեւ Հռոմի պապ Լեւոն XIV-ը՝ կոչ անելով գտնել խաղաղ, կայուն եւ արդար լուծում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹԻՎ

ԱՄՆ ներգաղթի եւ մաքսային վերահսկողության ծառայությունը (ICE) հուլիսին ձերբակալել է ավելի քան 46 հազար անօրինական ներգաղթյալի, ինչը Դոնալդ Թրամփի նախագահության երկրորդ ժամկետի ընթացքում գրանցված ամսական ամենաբարձր ցուցանիշն է: Այս մասին հայտնում է CBS News-ը՝ հղում անելով գերատեսչության ներքին փաստաթղթերին: Համեմատության համար՝ հունիսին ձերբակալվել էր 43 հազար անօրինական ներգաղթյալ:

Հեռուստաալիքի տվյալներով՝ ներկայում ICE-ի կալանքի տակ պահվում է շուրջ 68 հազար մարդ, մինչդեռ հունվարին այդ թիվը կազմել է 70 հազար: Ներգաղթի ծառայությունը զգալիորեն ընդլայնել է իր գործողությունների աշխարհագրությունը. ձերբակալություններ են իրականացվում օդանավակայաններում, ներգաղթի ծառայության ստուգման գրասենյակներում եւ երկրի տարբեր բնակավայրերում: CBS News-ի տեղեկություններով՝ ամռանը սկսված ակտիվության աճը շարունակվել է նաեւ հուլիսին, քանի որ Սպիտակ տունը պահանջել է օրական գրանցել շուրջ 2 հազար ձերբակալություն:

Վերջին շաբաթներին մեծ արձագանք են ստացել նաեւ ICE-ի քաղաքացիական հագուստով աշխատակիցների կողմից օդանավակայաններում՝ նստեցման ելքերի եւ գրանցման սեղանների մոտ իրականացված ձերբակալությունները, որոնք հնարավոր են դարձել Տրանսպորտային անվտանգության վարչության հետ համագործակցության ընդլայնման շնորհիվ: Թրամփի վարչակազմը նաեւ ընդլայնել է այն անձանց շրջանակը, որոնք ենթակա են ձերբակալման եւ արտաքսման: Մասնավորապես, ավելի քան 300 հազար հաիթցի ներգաղթյալ զրկվել է ժամանակավոր պաշտպանության կարգավիճակից:

«Թրամփի երկրորդ նախագահական ժամկետի սկզբից ի վեր երկիրը լքել է ավելի քան 3 միլիոն անօրինական ներգաղթյալ, այդ թվում՝ մոտ 2,2 միլիոնը՝ կամավոր արտաքսման շրջանակում: Հուլիսի 12-ի դրությամբ արտաքսվել է ավելի քան 985 հազար, իսկ ձերբակալվել՝ ավելի քան 1 միլիոն անօրինական ներգաղթյալ», - CBS News-ին հայտնել է ԱՄՆ ներքին անվտանգության նախարարությունը:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Հորմուզի նեղուցով նավթի փոխադրումները լիովին չեն դադարեցվել, չնայած Իրանի եւ Միացյալ Նահանգների միջեւ համաձայնագրի բացակայությանը, երկուշաբթի օրը հաղորդել է CNN-ը:

«Մինչեւ 5 միլիոն բարել նավթ է անցնում Պարսից ծոցից Օմանի ափերի մոտ գտնվող հարավային միջանցքով», - հաղորդել է հեռուստաալիքը՝ հղում անելով նավագնացության աղբյուրներին:

CNN-ի հաղորդմամբ՝ նավագնացությունը շարունակվում է «չնայած իրանական անօդաչու թռչող սարքերի պարբերական հարձակումներին»:

«Հորմուզի նեղուցով երթեւեկությունը շարունակում է ակտիվ մնալ՝ չնայած բոլոր առկա դժվարություններին», - մեջբերել է հեռուստաալիքը Մարիսկի ծովային հետախուզության գործակալության հայտարարությունը:

● *Մարզերում հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը պարեկները հայտնաբերել են առանց մանկական նստատեղի՝ քարսիթի՝ 328 դեպք:*

IDBANK

ԻԴՐԱՄԸ ԵՎ IDBANK-Ը՝ SEASIDE STARTUP SUMMIT-Ի ՍՏԱՐՏԱՓՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ

Հազարավոր գաղափարներ, բազմաթիվ մասնակիցներ՝ մեկ վայրում: Seaside Startup Summit-ն այս տարի եւս համախմբել էր նորարար լուծումներ փնտրող ստարտափերներին եւ արդեն իսկ կայացած խոշոր բիզնեսի ներկայացուցիչներին:

Իդրամի ու IDBank-ի մենթորները սկսնակ ստարտափերների կողքին են՝ օգնելու հեշտությամբ հաղթահարել զարգացման բարդ ճանապարհը, տալու հուզող հարցերի պատասխաններն ու գտնելու նորարար լուծումներ ստարտափերի աճի համար:

Իդրամի եւ IDBank-ի առանցքային գործընկերների եւ թվային վճարումների նախագծերի բաժնի ղեկավար Ալբերտ Թունյանը, ՓՄՁ ներգրավման բաժնի ղեկավար Աղվան Աբրահամյանը եւ կորպորատիվ բիզնես գործընթացների եւ թիմի զարգացման ղեկավար Հայկ Մուրադյանը վստահ են, որ բազմաթիվ հետաքրքիր գաղափարներ որոշ ժամանակ անց մուտք կգործեն հայաստանյան շուկա:

«Կարեւոր է սիրահարվել ոչ միայն սեփական նորարարություններին, այլեւ հատուկ ուշադրություն դարձնել հաճախորդների գոհունակությանը: Հաճախ հիմնադիրներն այնքան են տարվում պրոդուկտի ստեղծմամբ, որ վաճառքները մղվում են երկրորդ պլան: Ուրախալի է փաստել, որ այսօր ստարտափներն ավելի մեծ ուշադրություն են դարձնում վաճառքներին, ինչն էլ հենց հաջողության գլխավոր գրավականն է»,- նշեցին ընկերությունների ներկայացուցիչները:

Seaside Startup Summit-ի շրջանակում IDBank-ի թվային բանկինգի տնօրեն եւ վարչության անդամ Սերգեյ Առաքելյանը ներգրավված էր ժյուրիի կազմում. նա անձամբ լսել ու գնահատել է ավելի քան 10 ստարտափների ելույթները:

Անդրադառնալով միջոցառմանն ու ներկայացված գաղափարներին՝Սերգեյ Առաքելյանը փաստեց, որ Seaside Startup Summit-ին մասնակցությունը IDBank-ի համար լավագույն հնարավորությունն է՝ծանոթանալու նորագույն ստարտափներին:

«Հատկանշական է Սամմիթի ձեւաչափը, որը մեկտեղում է ամենատարբեր ոլորտներ ներկայացնող նախագծեր: Առանձնահատուկ ուրախալի է տեսնել ֆինանսական ոլորտին առնչվող լուծումներ, որոնք հիմնված են արհեստական բանականության եւ ժամանակակից տեխնոլոգիական միտումների վրա»,- ասաց Սերգեյ Առաքելյանը:

Այդի բանկ եւ Իդրամ ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ Գ

ՆՈՐ ՔԱՐՏԸ՝ ԲԻԶՆԵՍԻ ՎՍՏԱՀԵԼԻ ՈՒՂԵԿԻՑ

Հայէկոնոմբանկը ներկայացրել է իր նոր պրեմիում Visa Signature Business վճարային քարտը՝ նախատեսված կորպորատիվ հաճախորդների համար: Բանկում վստահ են՝ սա ոչ թե հերթական վճարային գործիքն է, այլ կորպորատիվ հարմարավետության նոր փիլիսոփայություն:

Ս.թ. հուլիսի 30-ին պաշտոնական շնորհանդեսի շրջանակում քարտը ներկայացվեց կորպորատիվ հաճախորդներին: Միջոցառմանը ներկա էին Բանկի եւ Visa-ի ներկայացուցիչները, ինչպես նաեւ կորպորատիվ հաճախորդներ:

«Հայէկոնոմբանկը շարունակաբար քայլեր է ձեռնարկում համալիր կերպով զարգացնելու ինչպես մանրածախ բանկային բիզնեսը եւ ներդրումային բանկինգը, այնպես էլ կորպորատիվ ուղղությունը: Բանկի գործունեության 35 տարիների ընթացքում բանկային բիզնեսի զարգացման գործում առանձնահատուկ տեղ են ունեցել հենց իրավաբանական անձինք, հատկապես՝ փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչները: Եւ այսօր ես շատ ուրախ եմ, որ մեր միջազգային գործընկեր Visa-ի հետ համատեղ մշակել ենք նոր պրոդուկտ, նոր հնարավորություն հենց այս հաճախորդների համար», - ողջունելով հյուրերին՝ իր խոսքում նշեց Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրեն Արտակ Առաքելյանը: Մատնանշելով Visa-ի հետ արդյունավետ համագործակցության փորձը՝ նա վստահություն հայտնեց, որ առաջիկայում եւս կարձանագրվեն այնպիսի արդյունքներ, որոնք կրկին կհաստատեն՝ այն ռեսուրսը, որը ներդրվում է նոր նախագծեր կյանքի կոչելու համար, լիովին արդարացված է:

«Ուրախ ենք ընդլայնել Հայէկոնոմբանկի հետ մեր բազմամյա գործընկերությունը՝ Visa Signature Business քարտի թողարկման միջոցով, ինչն արտացոլում է Հայաստանի աճող անկանխիկ տնտեսության հարցում մեր ընդհանուր տեսլականը: Այս քարտով մենք մեր պրեմիում դասի հաճախորդներին առաջարկում ենք ծախսերի պարզեցված կառավարում եւ ճանապարհորդական առաջնակարգ արտոնություններ՝ դարձնելով վճարումներն առավել հարմարավետ: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայէկոնոմբանկին այս արդյունավետ համագործակցության համար: Visa-ն հավատարիմ է Հայաստանի թվային փոխակերպմանն աջակցելու իր հանձնառությանը՝ ներդնելով նորարարական լուծումներ եւ արագացնելով թվային վճարումների կիրարկումը», - իր ելույթի շրջանակում նշեց Կովկասում եւ Մոլդովայում Visa-ի տարածաշրջանային ղեկավար Դիանա Կիգուրաձեն:

Միջոցառումն ավելի տպավորիչ դարձրեց իրական ռեժիմում էքսկլյուզիվ «Signature» բույրի ստեղծումը՝ ոգեշնչված քարտի փիլիսոփայությամբ եւ կորպորատիվ ոճով: Այն որպես հուշանվեր հանձնվեց միջոցառման հյուրերին:

Բացառիկ արտոնություններ եւ պրեմիում հարմարավետություն՝ աշխարհի ցանկացած կետում

Visa Signature Business քարտը նախատեսված է ՀՀ ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար: Քարտն ապահովում է՝

բիզնես կոնսիերժ ծառայություն 24/7 ռեժիմով՝ ներառյալ տարեկան 1 անվճար իրավաբանական կամ հաշվապահական խորհրդատվություն,

ճամփորդական ապահովագրություն (թռիչքի հետաձգում, բժշկական ծախսեր, անձնական իրերի կորուստ եւ այլն)՝ մինչեւ 500,000 ԱՄՆ դոլարի չափով,

անսահմանափակ մուտքի հնարավորություն (պայմանների բավարարման դեպքում) աշխարհի 450 քաղաքների ավելի քան 1200 օդանավակայանների բիզնես սրահներ,

տարեկան 10 անվճար Fast Track ծառայության հնարավորություն աշխարահի ավելի քան 30 օդանավակայաններում,

հաճախորդների գլոբալ սպասարկում 24/7 ռեժիմով աշխարահի ցանկացած կետում՝ արտակարգ իրավիճակների դեպքում, բժշկական եւ իրավաբանական աջակցություն,

բազում վճարային առավելություններ, զեղչեր, քեշբեքեր, ինչպես նաեւ հատուկ առաջարկներ գովազդային, կրթական հարթակներում եւ շատ ավելին:

Visa Signature Business քարտը՝ որպես կրեդիտային քարտ, ունի վարկային գծի տրամադրման հնարավորություն (առավելագույնը՝ 10մլն դրամ, 30 օր արտոնյալ ժամանակահատվածով):

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

EUROMONEY-ԻՆ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ Գ

Euromoney-ն ֆինանսական ոլորտի ամենահեղինակավոր միջազգային դարբերականներից մեկն է, իսկ դրա Awards for Excellence մրցանակները ողջ աշխարհում բանկերի ձեռքբերումներն ու ոլորտում ունեցած հաջողությունների ամենահեղինակավոր գնահատականներից են:

Կազմակերպությունը հրապարակել է հոդված՝ներկայացնելով Կոնվերս Բանկի թվային փոխակերպման ընթացքը եւ գրանցած հաջողությունները, ինչի շնորհիվ Բանկը վերջերս լավագույնն է ճանաչվել Euromoney-ի մրցանակաբաշխության «Armenia's Best Digital Bank for Consumers» անվանակարգում:

Հոդվածում Euromoney-ն առանձնացրել է Կոնվերս Բանկի թվային առաջընթացի հիմնական ուղղությունները՝ մասնավորապես ընդգծելով.

Թվային ծառայությունների ընդլայնումը. Converse Mobile եւ C360 հարթակների զարգացման շնորհիվ հաճախորդները մեկ միասնական միջավայրում կարող են օգտվել եւ կառավարել ավելի քան 15 ծառայություն:

Առցանց գործարքների աճը. Դիտարկված ժամանակահատվածում հավելվածի ակտիվ օգտատերերի թիվն աճել է 17%-ով, եւ հավելվածի միջոցով է իրականացվել գործարքների շուրջ 70-80%-ը:

Գործարքների արագությունը. Հաշվի բացման միջին ժամանակը կրճատվել է 5 րոպեից մինչեւ մոտ 20 վայրկյան՝ կենսաչափական նույնականացման եւ KYC գործընթացների ներդրման շնորհիվ:

Թվային վաճառքների մասնաբաժնի եւ թվային հարթակներում վարկավորման աճը. Էապես աճել է թվային հարթակներում մանրածախ պրոդուկտների վաճառքի մասնաբաժինը:

Թվային վարկավորման զարգացումը. Ավտոմատացված գնահատման համակարգերի եւ նախահաստատված առցանց վարկավորման ներդրումը նպաստել է վարկավորման գործընթացների արագացմանը եւ մանրածախ վարկային պորտֆելի 16% աճին:

Գործառնական արդյունավետության բարձրացումը. Թվայանցման արդյունքում ամսական ավելի քան 100,000 փաստաթուղթ ստորագրվել է էլեկտրոնային եղանակով:

Euromoney-ի գնահատմամբ, այս զարգացումները վկայում են թվային բանկային փորձառությունը կատարելագործելու, ծառայությունների հասանելիությունն ընդլայնելու եւ հաճախորդների սպասարկման նոր չափանիշներ ձեւավորելու ուղղությամբ Կոնվերս Բանկի հետեւողական աշխատանքի մասին:

Կոնվերս Բանկը թվային լուծումների մշակման եւ կատարելագործման ընթացքում նաեւ կարեւորում է միջազգային լավագույն փորձի եւ ոլորտի առաջատար կազմակերպությունների էքսպերտիզայի կիրառումը: Մասնավորապես, Converse Mobile հավելվածում առցանց նույնականացման եւ հաճախորդի գրանցման եւ հաշվի բացման գործընթացների, ինչպես նաեւ C360 հարթակի կառուցման ու հաճախորդակենտրոն առաջարկների մշակման նպատակով հաճախորդների կարիքների եւ վարքագծի վերլուծության ոլորտում Բանկը համագործակցել է Visa Consulting-ի հետ՝կիրառելով միջազգային լավագույն փորձն ու խորհրդատվական փորձագիտությունը:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐԻԱՆԱ ԳՐԱՆԴԵ

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ Է ՎԵՐՑՆՈՒՄ

33-ամյա փոփ աստղ Արիանա Գրանդեն ցնցել է երկրպագուներին՝ հայտարարելով, որ սեպտեմբերի 1-ին իր «Eternal Sunshine» համաշխարհային շրջագայության ավարտից հետո անորոշ ժամանակով դադար կվերցնի: Այս որոշումը նաեւ երգչուհուն ստիպում է լքել «Sunday in the Park with George» մյուզիքլը, որտեղ նա պետք է նկարահանվեր «Wicked» ֆիլմի իր գործընկեր Ջոնաթան Բեյլիի հետ:

Արտիստի ներկայացուցիչը հաստատել է, որ Գրանդեն որոշել է «հեռանալ հանրության աչքից»՝ իր ֆիզիկական եւ հոգեկան առողջությունը վերականգնելու համար, հայտնում է NEWS.am STYLE-ը:

Ինչն է նրա հեռանալու պատճառը

Page Six-ի աղբյուրները բացահայտել են երգչուհու որոշման վրա իրականում ազդած գործոնների մանրամասները:

Անդադար սթրես եւ հյուծվածություն. երգչուհին վերջին մի քանի տարիների ընթացքում աշխատել է անդադար գրաֆիկով՝ համատեղելով նկարահանումները, ալբոմի ձայնագրությունը եւ մեծ շրջագայությունը:

Կոշտ բոդիշեյմինգ. Հիմնական պատճառը նրա արտաքին տեսքի անդադար եւ ագրեսիվ քննադատությունն էր: Նրա «ցավոտ նիհարության» մասին քննարկումների նոր ալիք բարձրացավ սոցիալական ցանցերում՝ «Petal» տեսահոլովակի թողարկումից հետո, որտեղ երգչուհին ներկայացել էր սեւ, նեղ հագուստով:

Անձնական կյանքի ճնշումը. Իթան Սլեյթերից նրա բաժանման եւ նախկին ընկերոջ՝ Ռիկի Ալվարեսի հետ վերամիավորման շուրջ լրատվամիջոցների մեծ ուշադրությունը միայն յուղ է լցրել կրակի վրա: «Նա ուրախ է բեմ վերադառնալու համար, բայց նա չափազանց գերծանրաբեռնված է: Արիանան երբեք լավ չի հաղթահարել լրատվամիջոցների մեծ ուշադրությունը, եւ նրա քաշի մասին անընդհատ բամբասանքները միայն վատթարացնում են իրավիճակը», - նշել է ներքին աղբյուրը: Լոնդոնյան «Կիրակի այգում Ջորջի հետ» մյուզիքլի պրոդյուսերները իրենց լիակատար աջակցությունն են հայտնել Գրանդեին՝ նշելով, որ հասկանում են, թե որքան դժվար է եղել այս քայլը նրա համար: Ներկայացման պրեմիերան Բարբիկանում հետաձգվել է մինչեւ 2027 թվականի ամառը, եւ նոր դերասանուհու անունը կհայտարարվի ավելի ուշ:

Մոտ մարդկանց խոսքով՝ Արիանան ներկայումս կենտրոնացած է իր ընտանիքի, սիրելիների հետ ժամանակ անցկացնելու եւ բեմ վերադառնալու համար որեւէ խիստ ժամկետ չսահմանելու վրա:

ՄԱՐՔԱԿԱՆ

Ի՞ՆՉ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ԲՐԱԶԻԼԱՑԻՆ

Վինիսիուս Ժունիորի պայմանագրի երկարաձգումը Մադրիդի «Ռեալի» համար վերածվել է բարդ գլուխկոտրուկի: Այս գործընթացը ձգձգվում է դեռեւս 2025 թվականի Աշխարհի ակումբային առաջնությունից հետո, երբ թիմը գլխավորում էր Խաբի Ալոնսոն: Հենց այդ ժամանակ կայացավ խաղացողի ներկայացուցիչների եւ ակումբի միջեւ վերջին դեմ առ դեմ հանդիպումը, որտեղ կողմերը մոտ էին համաձայնության, սակայն վերջին պահին ամեն ինչ կանգ առավ: Այժմ բանակցությունները վերսկսվելու են հենց այդ կետից: armsport-ի փոխանցմամբ՝ այս մասին տեղեկացնում է AS-ը:

2025-ի հուլիսին Վալդեբեբասում կայացած հանդիպման ժամանակ բրազիլացին զգալիորեն զիջել էր իր ի սկզբանե պահանջած ֆինանսական ախորժակը (տարեկան մոտ 30 մլն եվրո), իսկ «Ռեալն» էլ, իր հերթին, բարձրացրել էր առաջարկը: Թվում էր, թե ստորագրումն անխուսափելի է, սակայն տարօրինակ կերպով ոչ մի կողմ չցանկացավ վերջնական զիջման գնալ փոքրիկ դետալներում: Ի վերջո, Վինիսիուսը պահանջեց տարեկան 20 միլիոն եվրո մաքուր աշխատավարձ: Սա այնքան էլ կտրուկ աճ չէ (ընդամենը 5 մլն տարբերություն) այն պայմաններից, որոնք նա ունի հիմա: Հիշեցնենք, որ 2022-ին (թեեւ պաշտոնապես հայտարարվեց միայն 2023-ի հոկտեմբերին) Վինին ստորագրել էր 5 տարվա պայմանագիր՝ մինչեւ 2027 թվականը, որով նախատեսվում էր 75 մլն եվրո մաքուր աշխատավարձ: Այն ունի աճողական բնույթ. սկսելով մոտ 10 միլիոնից՝ վերջին տարում այն հասնելու է 18 միլիոնի: Բացի այդ, կար կետ, ըստ որի՝ The Best մրցանակը կամ «Ոսկե գնդակը» նվաճելուց հետո խաղացողը ստանում է տարեկան եւս 2 մլն եվրո բոնուս:

Այսօրվա բանակցություններում արդեն կան նոր կետեր: Վինին կարող է պահանջել պայմանագրի երկարաձգման հավելյալ բոնուս՝ նման այն բոնուսին, որը Մբապեն ստացավ «Ռեալ» տեղափոխվելիս, ինչպես նաեւ ավելի մեծ տոկոսաբաժին իր իմիջային իրավունքներից:

Իմիջային իրավունքները ֆինանսական կարկանդակի ամենահամեղ պատառն են: Կիլիան Մբապեն տնօրինում է իր գովազդային եկամուտների գրեթե 100%-ը, ինչն օգնեց ակումբին կոմպենսացնել նրա աշխատավարձը: Վինիսիուսը, լինելով մոլորակի գլխավոր մարզական դեմքերից մեկը, ձգտում է նույնին: Նա պայմանագրեր ունի համաշխարհային 18 հսկաների հետ, որոնց թվում են՝ Nike, Apple, Playstation, Pepsi, Gatorade, Prada, Boss եւ անգամ ՅՈՒՆԵՍԿՕ-ն:

Բրազիլացու շրջապատից եկող լուրերը հուշում են, որ նա ցանկանում է մնալ Մադրիդում: Անգամ եթե կողմերը համաձայնության չգան, խաղացողի պլանն է մնալ ակումբում մինչեւ պայմանագրի ավարտը եւ հեռանալ ազատ գործակալի կարգավիճակով: Սակայն այս բոլոր հարցականների պատասխանները կտրվեն առաջիկա ժամերին, երբ կկայանա վճռորոշ դեմ առ դեմ հանդիպումը Վինիսիուսի, Ժոզե Մոուրինյուի եւ «արքայական» ակումբի ղեկավարության միջեւ:

ԲԱՆԿԵՐ

INVESTOR´S DAY ԱՄԵՐԻԱԲԱՆԿՈՒՄ

Կայացել է Ամերիաբանկի հերթական Investor's Day միջոցառումը, որի օրակարգում երկու թեմա էր՝ 2026թ. առաջին կիսամյակում կապիտալի շուկաների ամփոփում, ինչպես նաեւ MyInvest-ում նոր հնարավորության ներկայացում:

«Այսուհետ փոքր ներդրողները եւ ընդհանրապես ներդրողները կկարողանան 5 անգամ ավելի մատչելի սակագներով իրականացնել ավտոմատացված էական ներդրումներ եւ շատ ավելի արագ հասնել իրենց ֆինանսական նպատակներին», - նշել է Ամերիաբանկի արտարժութային եւ բրոքերային գործառնությունների գծով համատնօրեն Դիանա Հակոբյանը:

Investor's Day-ն Ամերիաբանկի կողմից կազմակերպվող միջոցառումների շարք է, որի նպատակն է միավորել ներդրումներով հետաքրքրված մարդկանց, իրականացնել փորձի փոխանակում ու նպաստել ներդրումային մշակույթի ձեւավորմանը մեր երկրում: Այն կազմակերպվում է յուրաքանչյուր ամսվա վերջին հինգշաբթի օրը: Շարքի առաջին միջոցառումը կազմակերպվել է 2025թ. սեպտեմբերին:

«Այսօր անցկացվեց մեր 11-րդ Investor's Day-ը: Ամփոփեցինք 2026 թվականի առաջին կիսամյակի կապիտալի շուկաների արդյունքները, ներկայացրինք հետաքրքիր վիճակագրական տվյալներ եւ տեղեկություններ, ինչպես նաեւ խոսեցինք շուկայի հետագա ակնկալիքների եւ կանխատեսումների մասին: Տարվա ընթացքում շարունակաբար ներկայացրել ենք վերլուծություններ, ներդրումային գաղափարներ եւ պորտֆելային լուծումներ, եւ մեր կանխատեսումների մեծ մասն արդեն տարվա կեսի դրությամբ դրական արդյունքներ է գրանցել: Հույս ունենք, որ տարվա երկրորդ կեսն էլ ավելի հաջող կլինի»,- հավելել է Ամերիաբանկի ֆինանսական շուկաների գլխավոր վերլուծաբան Գուրգեն Այվազյանը:

Կազմակերպիչների խոսքով՝ Investor's Day-ի շուրջ ձեւավորվել է ներդրողների ակտիվ համայնք: Մասնակիցներն էլ իրենց հերթին նշում են՝ նման հանդիպումները կարեւոր են թե ոլորտի փորձագետների կարծիքը լսելու եւ թե ներդրումներ անելիս առավել վստահ որոշումներ կայացնելու տեսանկյունից:

Թե՛ Investor's Day միջոցառումը եւ թե՛ դրան հաջորդող քննարկումները եւս մեկ անգամ փաստում են, որ ներդրումներն ու ֆինանսական գրագիտությունն այսօր հասարակության համար հետաքրքիր եւ արդիական են:

10% CASHBACK

Արդշինբանկը Mastercard-ի հետ համատեղ անց է կացնում cashback ակցիա իր քարտապանների համար:

Օգոստոսի 3-ից մինչեւ հոկտեմբերի 3-ը ակցիային մասնակցող ռեստորաններում եւ սրճարաններում Արդշինբանկի POS տերմինալներով Արդշինբանկի Mastercard քարտերով վճարումներ կատարելիս քարտապանները կստանան 10% cashback:

Ակցիային կարող են մասնակցել Արդշինբանկի բոլոր Mastercard քարտապանները՝ բացառությամբ Mastercard Pension (կենսաթոշակային) քարտապանների: Յուրաքանչյուր քարտի համար ամբողջ ակցիայի ընթացքում հնարավոր է ստանալ հանրագումարային մինչեւ 20,000 ՀՀ դրամ cashback (ներառյալ հարկերը), որը կփոխանցվի նույն քարտին ակցիայի ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Առաջարկը կգործի Երեւանի եւ մարզերի հետեւյալ ժամանցային կետերում.

«Յասաման» ռեստորանների ցանց (Երեւան՝ Եկմալյան 1/1, Ծովագյուղ եւ Ծաղկաձոր)

«Սիռովարնյա» ռեստորանների ցանց (Երեւան՝ Հյուսիսային պողոտա 5 եւ Վազգեն Սարգսյան 2)

«Գինետուն» ռեստորան (Երեւան-Սեւան ավտոմայրուղի)

«Սարիգարդ» ռեստորան (Գառնի)

«Ռեդ Բրիջ» ռեստորան (Երեւան)

«Օգոստոս» սրճարան (Երեւան)

«Դը Պարկ Կաֆե» ռեստորան (Երեւան)

«Լոս Պուեբլոս» ռեստորան (Երեւան)

Cashback-ը ենթակա է հարկման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ակցիայի մանրամասն պայմաններին կարող եք ծանոթանալ Արդշինբանկի պաշտոնական կայքում:

Mastercard ստանդարտ եւ պրեմիում դասի քարտեր կարելի է պատվիրել Արդշինբանկի ցանկացած մասնաճյուղում, բանկն ունի 74 մասնաճյուղ եւ ապահովում է ներկայություն Հայաստանի բոլոր մարզերում եւ Երեւանում:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում օգոստոսի 11-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «ԿԱՐԱՊԻ ԼԻՃԸ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչ է վարկային բյուրոն:

Նարինե Քեշիշյան, 49 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկային բյուրոն իրականացնում է իրավաբանական եւ ֆիզիկական անձանց ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկության (վարկային տեղեկատվության) հավաքագրում, մշակում, պահպանում, տրամադրում, ինչպես նաեւ դրանց հիման վրա վարկային զեկույցի պատրաստման գործունեություն:

Վարկային բյուրոյի ծառայությունների շնորհիվ յուրաքանչյուր իրավաբանական կամ ֆիզիկական անձ հնարավորություն է ստանում

ժամանակին կատարելով իր ֆինանսական պարտավորությունները՝ կերտել դրական վարկային պատմություն եւ օգտագործել այն որպես ծանրակշիռ ակտիվ ֆինանսական ծառայություններից արտոնյալ պայմաններով օգտվելու համար,

ճիշտ կառավարել սեփական ֆինանսական պարտավորությունները եւ մշտապես տեղեկացված լինել սեփական ֆինանսական պարտավորությունների կատարման ընդհանուր պատկերի մասին:

Վարկային բյուրոյի ծառայությունները թույլ են տալիս վարկատուներին (բանկեր, վարկային կազմակերպություններ), ինչպես նաեւ տարաժամկետ վճարման սկզբունքով («ապառիկ») ապրանքներ վաճառող կամ ծառայություններ մատուցող կազմակերպություններին կանխելու վարկառուների/հաճախորդների կողմից ավելորդ պարտավորությունների ստանձնումը, կրճատելու անհուսալի պարտավորությունները եւ աջակցելու պարտավորությունների ժամանակին կատարմանը:

ԱՔՈՒԱ Քրեդիտ Ռեփորթինգ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք առանց առերես շփման բոլոր գործարքները կամ գործարար հարաբերությունները պետք է դիտարկվեն որպես բարձր ռիսկային:

Գեղամ Նազոյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛: Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 22-րդ կետի համաձայն՝ առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ միանգամյա գործարքի կնքումը դիտարկվում է որպես բարձր ռիսկային, իսկ կանոնակարգի 2-րդ կետով նախատեսված են այն նվազագույն լրացուցիչ միջոցառումները, որոնք պետք է իրականացնեն ֆինանսական հաստատությունները առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս կամ միանգամյա գործարք կնքելիս:

ՀՀ Կենտրոնական բանկ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Խոշոր հրդեհ Գետափնյա բնակավայրի աղբավայրում. կրակն ու ծուխը տեսանելի էին մի քանի կմ-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 10 + 15 + 26 + 30
	Կոտայքի լեռներ	+ 10 + 14 + 26 + 29
	Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 + 32 + 35
	Գեղարքունիք	+ 11 + 16 + 26 + 29
	Լոռի	+ 11 + 16 + 25 + 28
	Տավուշ	+ 12 + 16 + 26 + 28
	Արագածոտնի լեռներ	+ 10 + 14 + 26 + 29
	Արագածոտնի նախալեռներ	+ 16 + 21 + 31 + 36

	Արարատ	+ 18 + 22 + 35 + 37
	Արմավիր	+ 18 + 22 + 35 + 38
	Վայոց ձորի լեռներ	+ 11 + 15 + 26 + 29
	Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 22 + 36 + 39
	Սյունիքի լեռներ	+ 11 + 14 + 20 + 23
	Սյունիքի նախալեռներ	+ 13 + 17 + 26 + 29
	Սյունիքի հովիտներ	+ 19 + 23 + 32 + 35
	Երեւան	+ 20 + 22 + 35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **04.08.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*